ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 22-Ի
ՀԵՐԹԱԿԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի մայիսի 22-ին ժամը 16:00-ին քաղաք Էջմիածին, Մովսես Խորենացի 2 հասցեում տեղի ունեցավ Վաղարշապատ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի չորրորդ նիստը, որին մասնակցեց Վաղարշապատ համայնքի ավագանու 13 անդամ հիմք ընդունելով գրանցման արդյունքները՝ այդ մասին հայտարարեց նիստն արձանագրողը:

Վաղարշապատ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի չորրորդ նիստին հրավիրված են համայնքային կառույցների ներկայացուցիչներ, համայնքապետարանի աշխատակիցներ:

Նիստը վարում է համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանը:

Նիստն արձանագրում է աշխատակազմի քարտուղար Գ.Հարությունյանը:

Ավագանու նիստին չներկայացած անդամների բացակայությունը համարվում է անհարգելի՝ հարգելիության վերաբերյալ տեղեկատվություն չներկայացնելու հիմքով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հրավիրված ավագանու նիստին օրենքով սահմանված կարգով 30 րոպեի ընթացքում չեն ներկայացել ավագանու անդամների ՝ օրենքով սահմանված թվի կեսից ավելին, ուստի նիստը իրավազոր չէ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդված 3-րդ մասով, նիստ վարողը հայտարարեց նիստը չկայացած:

Ավագանու նիստն ավարտվեց 2024 թվականի մայսի 22-ին ժամը 16:32-ին: